

ԱՄՓՈՓՈՒՄ

ԱՆԿԻՆԱԽՈՐՀԵՐՈՒ ՔԱՌԱԹԵՒ ՏԻՊԻ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔՆԵՐԸ

Տիպարանական ուսումնասիրությունն այսրկովկասեան

եկեղեցիներու խումբի մը

(ԺԱՆ ՄԻՇԵԼ ԹԻԵՐԻ)

Ներկայ աշխատությունը տիպարանական մանրագնին ուսումնասիրությունն մըն է այսրկովկասեան շրջանի՝ անկիւնախորշերով քառաթեւ տաճարներուն: Ուսումնասիրությունը կը բաժնուի երեք գլխաւոր մասերու՝ որոնց կը յաջորդեն եղրակապութիւնները:

Առաջին մասին մէջ, յետ կատարելու դադարներու եւ հզորութեան կարեւոր յատկութիւնները եւ բնորոշելու անկիւնախորշերով քառաթեւ կառուցուածքներու հիմնական յատկանիշերը, հեղինակը կը ներկայացնէ այս տիպի կառուցուածքներու դասակարգում մը, հիմնուելով անկիւնախորշերու թիւին եւ շրջաձիւրի ձեւին վրայ: Այս գրքու տարրերուն տեսականօրէն կարելի տասնեակու գոլգորգութիւններէն՝ պատմականօրէն իրադրութեամբ են հօթը հատը: Այս հեղինակը մանրամասնօրէն կը վերլուծէ մի առ մի այսրկովկասեան այս տիպի ծանօթ բոլոր եկեղեցիներուն ճարտարապետական կառույցը: Այս առաջին մասին վերջաւորութեան, նկատի կ'առնուին խնդրոյ առարկայ տիպին առնչութիւնները միւս կեդրոնածաւալ յատկազօծերուն հետ:

Երկրորդ մասին մէջ երկրորդէն կ'ուսումնասիրուի ներկայ աշխատանքին նիւթ կազմող տիպին ծագման հարցը: Յետ ներկայացնելու, կարգով, բիւզանդական, իրանահայկական, բնիկ, ասորական, հելլենիստական յառաջադայութեան վարկածները եւ մասնաւորապէս իւրաքանչիւրին տկար կողմերը, հեղինակը կը խորհի թէ լաւագոյն է առանձնապէս որոնել ծագումը այս տիպի յատկանշական տարրերուն՝ որ են քառակուսիի վրայ զետեղուած դմբէթը, թմբուկը, թեւերը, անկիւնի սենեակները, անկիւնախորշերը: Հեղինակը այն եզրակացութեան կը յանգի՝ որ կարելի չէ ներկայ տուեալներով սահմանել այսրկովկասեան կեդրոնածաւալ յատկազօծերուն համար տրամադրանական յեղաշրջումի գիծ մը, որ առաջնորդած ըլլայ անկիւնախորշերով քառաթեւ յատկազօծին: Բայց հաւանական կը նկատէ՝ թէ այս տիպը իր ծագումը կը գտնէ մէկ կողմէ հելլենիստական դամբարանային կոթողներուն մէջ՝ քրիստոնէական վկայարաններուն միջնորդութեամբ՝ և միւս կողմէ իրանեան տորւաններուն մէջ:

Երրորդ մասը նկատի կ'առնէ ուսումնասիրուած տիպարանութեան ներքին յեղաշրջումը եւ կ'աւարտի այս յեղաշրջումը ուրուագրող գծազիր պատկերով մը: Իբր եզրակացութիւն՝ հեղինակը այն տեսակէտը կը պարզէ որ ուսումնասիրուած տիպը առաւելաբար յատկանշական է հայ ճարտարապետութեան ծաղկումի առաջին մեծ շրջանին, որ կը կանխէ արաբական արշաւանքները: Հայաստանի կրօնական անջատումը բիւզանդիոնէն՝ որոշ կղզիացում մը առաջ կը բերէ նաեւ արուեստի ծարգին մէջ, որ սակայն կը նպաստէ տալու հայ արուեստին իր ուրոյն դրոշմը: Եթէ կարելի չէ ընդունիլ բիւզանդական ցայտուն ազդեցութիւններ հայաստանի մէջ, միւս կողմէ նոյնքան անհաւանական կը թուի հայ ճարտարապետութեան դէպի Արեւմուտք ճառագայթումի վարկածը:

ՔՐԻՍՏՈՍ՝ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԼՈՅՍԻՆ ՏՄԿ

ԱԿԵՏԱՐԱՆՆԵՐԸ ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆ ԹԷ ԱՌԱՍՊԵԼՆԵՐ

(Շար. տե'ս «Բազմալէպ» 1978, ք. 3-4, էջ 438-440)

Դարերու ընթացքին, Աւետարանիչներու ճամբատախօսութիւնը եւ Աւետարաններու պատմականութիւնը վասկածի ներքեւ չէր առնուած հաւատացեալներու կողմէ:

Աւետարաններու պատմական գիրքեր ըլլալուն դէմ առարկուածութիւնները, ընդհանրապէս, կու գային քրիստոնէութեան հակառակորդներուն կողմէ:

Վերջին դարերու ընթացքին, սակայն, երբ հրապարակ ելան բանապաշտ եւ ալ նորադատ իմաստասիրական գաղափարներ, որոնք ծնունդ տուին պատմական եւ քանասիրական քննադատութեան, տարակոյսի տակ դրուեցաւ Աւետարաններու պատմականութիւնը նաեւ որոշ չափով «հաւատացեալ» գիտնականներու կողմէ:

Ս. Գիրքի մասնագէտներու խաղաղաբար քաղաքական մը, խըտաբար պատմագէտի ակնոցով, ակաւ թառ առ թառ քննել Աւետարանները եւ այն բոլոր գրութիւնները, որոնք կը հային Յիսուսի անձին ու կեանքին:

Վերոյիշեալ բանասէրներու մեծամասնութեան նպատակն էր պատասխանել սա հարցումին, թէ արդեօք Աւետարաններու ընդմէջէն կարելի՞ է հասնիլ պատմութեան իրական Յիսուսին, կարելի՞ է արդեօք պատմական Քրիստոսի գիտագիծը երեւան հանել՝ մեզի հասած գրութիւններէն:

Պէտք է խոստովանիլ, սակայն, որ կարգ մը իմաստուն գիտնականներ, լուրջ աշխատանք տարին, մարդ անցընելով անցեալի ամբողջ պատմութիւնը եւ ամէն տեսակի գրութիւններ, որոնք մեզի հասած են հրեայ, յոյն, լատին եւ ալ հեղինակներէ:

Անոնց աչքէն շլիւղեցան վերջին շրջաններու հնազնիւական պեղումներէն առաջ եկած նորութիւնները, աշխարհագրական եւ տեղագրական նորայայտ տուեալները, հին ատեն՝ Պաղեստինի մէջ կիրարկուած ժողովրդական բարքերը, աստիճանութիւնները:

Անոնց աշխատասիրութիւններուն վրայ, նոր լոյս փոխեցին վերջերս տեղի ունեցած ձեռագրական գիտերը, մասնաւորապէս Քուժ-րանի մէջ գտնուած գրութիւնները:

Նկատի առնուեցան կիպո կոչուած աւետարանները, որոնք առաւել կամ նուազ չափով տարածուած էին ժողովուրդներու մէջ, երկրորդ դարու կէսէն սկսեալ մինչեւ վեցերորդ դարու վերջերը: 1945ին ալ, Վերին Եգիպտոսի մէջ Nag Hamadi կոչուած վայրը, գտնուեցան կեղծ Աւետարաններէն նմոյշներ, մասնաւորաբար Թովմաս առաքեալին վերագրուած աւետարանը:

ԱՌԵՏԱՐԱՆՆԵՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ ԵՆ

Աւետարաններու պատմական գիրքեր ըլլալու աւանդական փաստարկութիւնը հետեւեալն է:

Գիրք մը պատմական արժէք ունի, երբ

ա. այդ գիրքին հեղինակը տեղեակ է գրած պատմութեան.

բ. երբ նոյն հեղինակը մտադրած է իրական պատմութիւն գրել եւ ոչ թէ առասպել:

Նախ՝ ընդլայնենք մեր փաստարկութեան առաջին պարբերութիւնը:

Աւետարանիչները տեղեակ էին Յիսուսի կեանքին, գործերուն եւ խօսքերուն:

Յովհաննէս Աւետարանիչ ականատես եւ ականջալուր վկայ է իր գրածներուն: Նոյնպէս Մատթէոս, որուն անունով մեզի հասած Աւետարանը, թէեւ աւելի ուշ կատարուած խմբագրութիւն մըն է, բայց որպէս հիմ ունի արամայերէն լեզուով գրուած հին Աւետարանը: Միւս Աւետարանիչները, Մարկոս եւ Լուկաս, անմիջական աշակերտներն էին Առաքեալներուն: Աւետարանիչները ունէին նաեւ ուրիշ աղբիւրներ, որոնցմէ շատ լաւ կրնային օգտուել, օրինակ՝ Ս. Աստուածածինէն, Յովսէփ Արեւմաթացիէն, Նիկողեմոսէն եւ ուրիշ ականատես վկաներէ:

Գիտենք թէ՝ Երուսաղէմի մէջ Մարկոս աւետարանիչին տունը հաւաքավայր եղած է առաքեալներուն եւ առաջին քրիստոնեաներուն, ուր կը կատարէին եկեղեցական պաշտամունքը եւ տեղի կ'ունենային

խօսակցութիւններ Յիսուսի մասին, որոնց ներկայ եղած է Մարկոս եւ շատ բան աորված: Թողունք որ, Մարկոս, երկար ատեն, աշակերտած է Պետրոս Առաքեալին, որուն քարոզչութիւնն ալ գրի առած է:

Լուկաս Աւետարանիչ, Պողոս Առաքեալի աշակերտը եղած է, տեսած է Մարիամ Աստուածածինը եւ շատ հաւանաբար անկէ լսած է հրեշտակին Աւետումը, Եղիսաբեթին այցելութիւնը, Յիսուսի ծընունդին մանրամասնութիւնները, Յիսուսի թրիստութիւնը, քառասնօրեայ տաճար այցելութիւնը, Յիսուսի՝ տասներկու տարեկանին տաճարին մէջ կորսուելը, եւայլն:

Գանք այժմ երկրորդ պարբերութեան, այն՝ թէ Աւետարանիչները ուզած են իրական պատմութիւն գրել եւ ոչ թէ առասպելներ:

Աւետարանիչներուն նպատակն էր աւետել Մեսիայի գալուտը ո՛չ միայն հրեաներուն, այլ ամբողջ աշխարհի:

Անոնք որեւէ պատճառ մը չունէին սուտ պատմութիւններով խաբել մարդկութիւնը եւ տարածել նոր վարդապետութիւն մը: Իրենց բել մարդկութիւնը եւ տարածել նոր վարդապետութիւն մը կրնար գալ՝ ժողո՜րդի շահ, ո՛չ պատիւ եւ ոչ ալ հարստութիւն մը կրնար գալ՝ հրեաներէն, եւ վերջին ներկայացնելով Յիսուսը, որ աստուած էր հրեաներէն, եւ որուն վարդապետութիւնը անհաճոյ էր հաճոյամոլ մարդոց:

Յիսուսի քարոզած կրօնքը խիստ էր եւ մեղքերու համար սահմանուած պատիժները՝ սոսկալի: Դժոխքի յաւիտեական կեանքն էր անգեղջ մեղաւորներուն վախճանը: Քրիստոնէական կրօնքը կը մասնաւորապէս հաստատուէր յաւիտեական կեանքի վրայ:

Այսպիսի կրօնք մը տարածելով, Քրիստոսի աշակերտներուն՝ ո՛չ թէ փառք եւ հարստութիւն կը սպասէր, այլ հալածանք, տանջանք եւ մահ:

Անշուշտ, քրիստոնէութիւնը շուտ տարածելու համար՝ աւելի տրամաբանական պիտի ըլլար, որ աւետարանիչները ներկայացնէին տարբեր կրօնք մը, որ յազեցում տար մարդկային կիրքերուն, ըլլար աւելի գիւրդին եւ հաճելի:

Բայց, աւետարանիչները նման բան մը չըրին, որովհետեւ իրենց նպատակն էր միմիայն ճշմարտութիւնը պրել:

Դարձեալ, անմեղքելի պիտի ըլլար, որ Քրիստոսի վարդապետութիւնը տարածողները սուտ պատմութիւններ հնարէին հետեւորդներ շահելու համար, երբ քաղաքական դատաւարտելի արարք մըն է նոյն ներ շահելու համար, երբ քաղաքական դատաւարտելի պիտի մղէր վարդապետութեան համաձայն, սուտ մը, որ մարդիկը պիտի մղէր ծանր մեղքի, որ է կռապաշտութեան, մարդ մը՝ իբր Աստուած պաշտել տալով:

Հոսակ, աւետարանիչները ո՛չ միայն չէին ուզեր, այլ նաեւ չէին կրնար ստել, կեղծել Քրիստոսի վարքը, քանի որ տակաւին շատ մը ականատես վկաններ կային, եւ տեղեակ ըլլալով իրականութեան,

անմիջապես պիտի հակադդէին եւ սուտը մէջտեղ պիտի հանէին: Ամէնէն առաջ հրեաները, որոնք ռիսերիմ թշնամիներն էին Գրիստոսի եւ իր վարդապետութեան, պիտի խայտառակէին եւ ծաղրի առարկայ պիտի դարձնէին աւետարանները:

Նմանապէս, այդ սուտերուն պիտի ընդդիմանային առաջին քրիստոնէաները, որոնք լաւատեղեակ էին Գրիստոսի կեանքին, դործերուն եւ խօսքերուն:

Առաքեալները եւ առաջին քրիստոնէաներէն շատեր՝ ո՛չ միայն ծանր հալածանքներու, զրկանքներու ենթարկուեցան, այլ նաեւ իրենց արիւնը թափեցին քրիստոնէութեան ճշմարտութեան համար:

Սուտ եւ շինծու բաներու համար արիւն թափելը՝ խելագարի դործ է:

ՆԵՐՔԻՆ ՓԱՍՏԵՐ

Մինչեւ հոս տեսանք թէ Աւետարանիչները քաջածանօթ էին իրենց պրածններուն եւ նաեւ ճշմարտախօս:

Վէպ մը կամ հեքեաթ մը գրել չէր իրենց նպատակը, այլ Յիսուսի կեանքին իրական պատմութիւնը:

Աւետարաններու պատմականութիւնը աւելի կը հաստատուի, երբ խորապէս գննելու ըլլանք նաեւ անոնց ընձեռած ներքին փաստերը:

Եթէ ուշի ուշով կարդալու ըլլանք Աւետարանները, անմիջապէս պիտի տեսնենք նկարագրութիւններու բնական պարզութիւնը, անկեղծ շեշտը եւ զարմանք պատճառող առարկայականութիւնը: Ո՛րքան գուռապ եւ բնական ոճով պատմուած են Յիսուսի գործերը եւ հրաշքները:

Առանց յետին միտքերու, կատարեալ անկողմնակալութեամբ, Աւետարաններու մէջ նկարագրուած են Առաքեալներուն թէ՛ դրական եւ թէ՛ ժխտական յատկութիւնները, նպատաւոր եւ աննպատարարքները, թերի կողմերը:

Առանց մտաւախութեան, Աւետարանիչները մեղի ներկայացուցած են Գրիստոսի զայրոյթով եւ խարազանով վաճառականները տաճարէն վտարելը, անոր լացը, Գեթսեմանիի պարտէզին մէջ, մահուան դիմաց՝ ունեցած վախը, տառապանքը, արիւն քրտնելը, եւլն.:

Առաքեալները հոն մեղի կը ներկայանան իրենց թերութիւններով ալ, որպէս տգէտ, վախկոտ, կոշտ, վատ, եսասէր, կռուարար, եւայլն...:

Աւետարաններու մէջ երբեմն կը հանդիպինք այնպիսի աննշան մանրամասնութիւններու, որոնք միայն ականատեսի մը կարելի է վերագրել:

Հոն յիշատակուած են, հրաշքի մը կամ դէպքի մը ճշգրիտ ժամերը: Այսպէս. «Յիսուս ճամբորդութենէն յոգնած՝ նստաւ ջրհորին վրայ, գրեթէ վեցերորդ ժամն էր՝ Իշխանազունին որդին հիւանդ էր: Յիսուս անոր ըսաւ. «Գնա՛, դաւակդ ողջ է»: Իշխանազունի ծառաները եկան եւ իրեն ըսին թէ տղադ ողջ է: Հարցուց ծառաներուն. «Ո՞ր ժամուն ապաքինեցաւ»: Պատասխանեցին. «Երէկ, եօթներորդ ժամուն ջերմը անցաւ»²: Յովհաննէս աւետարանիչ կը գրէ. «Յամաքէն երկու հարիւր կանգուն հեռու էին»³: Քիչ մը ետք կու տայ հրաշքով բռնուած ձուկներուն ճիշտ թիւը, որ է «հարիւր յիսուններեք մեծամեծ ձուկեր»⁴:

Դարձեալ Յովհաննէս աւետարանիչն է, որու աչքէն չէ վրիպած, Կանայի հարսանիքը նկարագրած ատեն, որ «քարէ վեց թակոյկներ կային հոն»⁵: «Վեցերորդ ժամէն մինչեւ իններորդ ժամը փաւար պատեց»⁶ կը գրէ Մատթէոս: «Վեց օր ետք, Յիսուս իր հետն առաւ Պետրոսը»⁷ կը ճշտէ, տեղ մը, Մարկոս: Յովհաննէս կը յիշէ թէ Նիկոմեդոս «հարիւր լիտրի չափ հալուէով խառն փմուռ» բերաւ:

Անթիւ են նման մանրամասնութիւնները, որոնք ցոյց կու տան թէ Աւետարանիչները իրական պատմութիւն կ'ուզէին գրել:

Ուշագրաւ է նաեւ որ հրեայ ժողովուրդին բարքերը, ծիսական արարողութիւնները, փարիսեցիներուն եւ ֆարիսեցիներուն մտայնութիւնը, ինչպէս կը նկարագրուին Աւետարաններուն մէջ, յար եւ նման են վերջերս Քուրանի մէջ գտնուած ձեռագիրներու նկարագրութիւններուն:

Հակառակ այդ շրջանին տիրող սովորութիւններուն եւ մտայնութեան, Յիսուս կը ներկայանայ ամբողջովին նոր վարդապետութեամբ, մարդկութեան նիւթապաշտ եւ հաճոյասէր դժացումները խարանդ եւ առաքինութիւնները փառաբանող սկզբունքներով:

Դժուար էր Յիսուսի առաքելութիւնը, քանի որ ընդհանուր հոսանքի դէմ է՝ որ պատուար մը կը կանգնէր, ստեղծելով իրեն դէմ անթիւ թշնամիներ: Աւետարաններուն մէջ, Աւետարանիչները, անվախօրէն, առանց նկատումներու, կը ներկայացնեն Յիսուսի վարդապետութիւնը իր ամէնէն խիստ կողմերով:

1. Յովհ. Գ. 6-7:

2. Յովհ. Դ. 46-52:

3. Յովհ. ԻԱ. 8:

4. Յովհ. ԻԱ. 11:

5. Յովհ. Բ. 6:

6. Մատթ. ԻԷ. 45:

7. Մարկոս, Թ. 1:

ՊԱՏՄԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Աւետարաններու պատմականութիւնը աւելի եւս կ'ամրապնդուի, երբ նկատի առնենք, որ անոնց մէջ պատմութեամբ տեղեւորուած զէպքերն ու դէպքերը ներդաշնակօրէն կը համապատասխանեն նոյն շրջանի հրեայ եւ օտար պատմիչներու գրածներուն:

Քիչ թէ շատ մեղի ծանօթ ժամանակաշրջանի մը մէջ ապրեցաւ Յիսուս:

Աւետարաններու մէջ յիշուած Օգոստոս կայսրը, Կիւրենիոս Ասորիքի կուսակալը, Հրէաստանի Հերովդէս թագաւորները, Պիղատոս, Աննա եւ Կայփափա քահանայապետները, պատմական անձներ են, յիշուած՝ նաեւ ժամանակակից հրեայ եւ հռոմայեցի պատմիչներէն:

Նոյն քանը կրնանք ըսել Պաղեստինի քաղաքներուն, դիւղերուն եւ այլ տեղագրական անուններուն համար:

Վերջին շրջանիս եղած պեղումները աւելի եւս հաստատեցին Աւետարաններու մէջ յիշատակուած տեղանուններու եւ անոնց աշխարհագրական դիրքերուն ճշգրտութիւնը: Այդ անուններէն են Կափառնառամ, Եմմաւոս, Բեթղեհէմ, Երիքով, Արիմաթեմ, Բեթանիա, Բեթսայիդա, Բեթփաղէ, Գեննեսարեթ, Նազարէթ, Եփրայիմ, Գերզեսա, զոյգ Կեսարեանները, Սամարիա, Նային, եւ այլն:

Վերջերս Երուսաղէմի մէջ գտնուեցան Պրոբատիկէի աւաղանը եւ հինգ սրահները:

Վերոյիշեալ գիտէն առաջ, շատ բանասէրներ կը տարակուսէին՝ Յովհաննէս Աւետարանիչի աւանդած Պրոբատիկէի աւաղանին մէջ բժշկուող հիւանդին պատմութեան մասին: Պեղումներէն դուրս ելած այդ աւաղանը հաստատեց Աւետարանիչին նկարագրութիւնը:

Մէկ վտարով մերօրեայ գիտութիւնը, իր բոլոր նուաճումներով, անհերքելիօրէն կը փաստէ Աւետարաններու պատմականութիւնը:

ԱՒԵՏԱՐԱՆՆԵՐՈՒ ԼԵԶՈՒՆ

Լեզուագիտութիւնը ծանրակշիռ արժէք ունի Աւետարաններու պատմական շրջանը որոշելու մէջ:

Աղներեւ է որ Աւետարաններու մէջ գործածուած յունարէնը, արամայերէն կը բուրէ:

Լեզուագիտներու համաձայն, սերտ կապ մը գոյութիւն ունի Աւետարաններու լեզուին եւ եթանասական թուականներուն՝ Պաղեստինի մէջ գործածուած արամայերէնին հետ:

Անվիճելի իրականութիւն մըն է, որ Աւետարանիչները պաղեստինեան ծագում ունէին, առ նուազն ապրած են Պաղեստինի մէջ:

ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐՈՒ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ԱՆՎԱԻԲ ԱՒԵՏԱՐԱՆՆԵՐԸ

Առաջին դարերու բոլոր Ս. Հայրերը, չորս Աւետարանները միայն կը ճանչնան որպէս աղբիւր իրենց հաւատքին, առանց վարանումի, դուրս նետելով բոլոր միւս անվաւեր աւետարանները:

Պարզ բաղդատութիւն մը՝ չորս Աւետարաններուն եւ անվաւեր աւետարաններուն միջեւ՝ ցոյց կու տայ առաջիններուն անկեղծութիւնը, բնականութիւնը, ճշմարտախօսութիւնը, իսկ վերջիններուն չինծու, առասպելական ու մերթ ծիծաղելի բնոյթը:

Վաւերական Աւետարանները ունին զուսպ, իրապաշտ, համոզիչ լեզու մը: Անվաւեր աւետարաններուն մէջ կը վխտան անհեթեթ, անբնական, անիրական զէպքեր: Օրինակի համար, անոնցմէ մէկուն մէջ կը պատմուի՝ թէ Յիսուս կը մեռցնէ այն սողաքը, որոնք չէին ուղեր իրեն հետ խաղալ, եւ այլն:

Աւետարաններու պատմականութիւնը ցոյց տալու համար բերինք «աւանդական» կոչուած փաստարկութիւնը, որ թէեւ համոզիչ է, բայց եւ այնպէս, կ'արժէ աւելի խոր քննել վերոյիշեալ նիւթը եւ նոր լուսաբանութիւններով փարատել ամէն տարակոյս:

Նախ տեսնենք թէ ինչ քանի առաջ եկած են Աւետարաններու պատմականութեան դէմ եղած տարակոյսները:

Տեսանք թէ Աւետարանները գրուած են մօտաւորապէս Յիսուսի մահէն շուրջ 35 տարիներ ետք:

Արդ, բանասէրները կը հարցնեն թէ, ի՞նչպէս կարելի է մէկու մը կենսագրութիւնը գրել մանրամասնօրէն, յիշել անոր գործերը, խօսքերը, երկարաշունչ քարոզները, առանց այլալիւր, փոփոխելու ճշմարտութիւնը, անոր մահէն 30-40 տարիներ ետք:

Նկատի առնելիք կէտ մըն է նաեւ որ Աւետարանիչներէն գոնէ երկուքը՝ Մարկոս եւ Ղուկաս, առաքեալ կամ Յիսուսի աշակերտ չեն եղած եւ կարելի չէ գիրենք իբրեւ ականատես եւ ականջալուր վկաններ ընդունել:

Յիսուսի կեանքին, գործերուն եւ խօսքերուն անմիջական գրաւոր արձանագրութիւն մը տեղի չէ ունեցած: Գոնէ երեք Աւետարանիչներու գործը անուղղակի գրառումն է ո'չ թէ անձնական յուշերու, այլ Առաքեալներու կողմէ կատարուած քարոզութեան:

Տարակոյսի ուրիշ աղբիւր մըն են նաեւ այն տարբերակները, որոնք կը տեսնուին Աւետարաններուն մէջ:

Արդարեւ, երբ ուշի ուշով Աւետարանները իրարու հետ բաղդատելու ըլլանք՝ պիտի հանդիպինք տարբերութիւններու, որոնք երբեմն, կարծես, գոնէ երեւութապէս, իրարու հակասական կը թուին: Պատումի եւ գրեւակերպի զգալի տարբերութիւն մը կայ նաեւ երեք Համաբարբառ Աւետարաններուն եւ չորրորդ Աւետարանին միջեւ:

Թէեւ, նախապէս անդրադարձած ենք այս տարբերութիւններու մասին, յարմար կը նկատենք անգամ մը եւս մատնանշել ատոնցմէ ոմանք:

Ղուկասի տէրունական աղօթքին, այսինքն «Հայր Մեր»ին⁸ մէջ, հինգ խնդրանք կայ միայն, մինչ Մատթէոս եօթը խնդրանք⁹ ունի:

Մատթէոսի համաձայն, Յիսուս, իր քարոզութեան սկիզբներն է որ «Հայր մեր»¹⁰ աղօթքը կը սորվեցնէ առաքեալներուն: Ղուկասի մօտ, աւելի ուշ է այդ աղօթքին ուսուցումը:

Մատթէոսի Աւետարանին¹¹ մէջ, Պետրոս՝ Քրիստոսը երեք անգամ կ'ուրանայ. երեք անգամներուն ալ, աղախինի մը առջեւ տեղի կ'ունենայ ուրացութիւնը: Իսկ Մարկոսի համաձայն, երրորդ ուրացութիւնը տեղի կ'ունենայ «չուրջը եղողներուն»¹² առջեւ:

Լեւան քարոզին մէջ, Մատթէոս¹³ ինը երանութիւններ կը յիշատակէ, մինչդեռ Ղուկաս¹⁴ հինգ երանութիւն միայն:

Դարձեալ, Մատթէոսի¹⁵ համաձայն, Յիսուս երկու կոյրեր կը բուժէ Երիզովի եղբին, իսկ Ղուկաս¹⁶ մէկ կոյր միայն կը յիշէ, առ ալ Երիզով մօտենալու ատեն, եւայլն:

Տարբերութիւնները աւելի կը շեշտուին, երբ երեք Համաբարբառ Աւետարանները քաղդատենք Յովհաննէսի Աւետարանին հետ:

Ահա քանի մը նմոյշներ:

Չորս Աւետարաններն ալ կը յիշատակեն՝ Յիսուսի տաճարի մէջ ջէն միաճառականները դուրս մղելու դէպքը:

Յովհաննէսի համաձայն, այս դէպքը կը պատահի Յիսուսի քարոզութեան սկիզբը: Միւս երեք աւետարանիչները զայն կը զետեղեն Յիսուսի կեանքի վերջին շրջանին:

8. Ղուկաս, ԺԱ. 1-4:

9. Մատթ. Զ. 7-13:

10. Մատթ. Զ. 9-13:

11. Մատթ. ԻԶ. 69-74:

12. Մարկոս, ԺԴ. 70:

13. Մատթ. Ե. 3-12:

14. Ղուկ. Զ. 20-26:

15. Մատթ. Ի. 29-30:

16. Ղուկ. ԺԸ. 35:

Յովհաննէս, չորս անգամ, Յիսուսի Երուսաղէմ երթալու մասին կը պատմէ, մինչդեռ, Համաբարբառ Աւետարաններուն մէջ, Յիսուս մէկ անգամ Երուսաղէմ կ'երթայ:

Դարձեալ Մատթէոսի¹⁷ համաձայն, Յիսուսի դատաւարութիւնը տեղի կ'ունենայ Կայիափա քահանայապետին քով. Յովհաննէս¹⁸, Կայիափայի տեղ՝ Աննա քահանայապետը կը յիշէ, եւայլն:

Այս եւ նման տարբերութիւններու առջեւ, կարգ մը բանասէրներ շուարած են եւ չեն գիտեր պատմական ինչ արժէք տալ Աւետարաններուն:

Երկրորդ դարուն, արդէն, Տատիանոս եւ աւելի ուշ՝ Ս. Օգոստինոս եւ ուրիշներ անդրադարձած էին Աւետարաններու մէջ տեսնուող վերոյիշեալ տարբերութիւններու մասին, եւ ջանացած՝ տրամաբանական լուծում մը գտնել անոնց:

Ս. Օգոստինոսէն ետք, Ս. Հայրերը եւ Ս. Գիրքի մեկնիչներ, մինչեւ այսօր, կը շարունակեն, առաւել կամ նուազ յաջող մեկնութիւններով հաշտեցնել Աւետարաններու մէջ երեւցող տարբերակները:

Ամէն պարագայի, վերոյիշեալ տարբերութիւնները ցոյց կու տան որ Յիսուսի կենսագրութիւնը դրի չէ առնուած օրը օրին:

Յիսուսի մահէն ետքն ալ, շրջան մը, Աւետարանը քերամացի քարոզուեցաւ Առաքեալներու եւ աշակերտներու կողմէ:

Յիսուս Առաքեալներուն ըսած էր. «Գացէ՛ք, ուրեմն, աշակերտեցէ՛ք բոլոր ազգերը... Սորվեցուցէ՛ք անոնց՝ պահել ինչ որ պատուիրեցի ձեզի»¹⁹:

Յիսուսի հրահանգն էր քարոզել Աւետարանը: Յետոյ է որ ըդդացուեցաւ Աւետարանը դրի առնելու պէտքը:

Երկրորդ դարուն, Երանոս հայրապետն ալ կ'ըսէր՝ թէ Աւետարանը նախ քարոզուեցաւ, ապա դրի առնուեցաւ:

Որով, առաջին շրջանի Առաքեալներուն քարոզութիւնը կարելի է կոչել «քերանացի Աւետարան»:

Բայց, քերանացի ըսուած խօսքերը եւ պատմութիւնները, բնականաբար աւելի ենթակայ են փոփոխութիւններ կրելու՝ քան զրաւորները:

Ինչպէս ըսինք, նախորդ գլուխին մէջ, Քրիստոսի Առաքեալները ինչպէս ըսինք, նախորդ գլուխին մէջ, Քրիստոսի Առաքեալները եւ աշակերտները քարոզիչներ ըլլալով, ունենդիրներուն, միջավայրին եւ ժամանակին յարմարելով, կ'ընդլայնէին կամ կը համառօրին եւ ժամանակին յարմարելով, կ'ընդլայնէին կամ կը համառօ-

17. Մատթ. ԻԶ. 54:

18. Յովհ. ԺԸ. 13:

19. Մատթ. ԻԸ. 19-20:

տէին Յիսուսի խօսքերը, անոր գործերուն եւ հրաշքներուն նկարագրութիւնը:

Բնական է որ Առաքեալները, իրենց խառնուածքին, նախասիրութիւններուն համաձայն, աւելի մանրամասնօրէն պատմէին զէպք մը, կամ տեղափոխէին զէպքերու ժամանակը ետեւէ ետեւ ներկայացնելով, օրինակի համար, Յիսուսի զանազան հրաշքները, որոնք տարբեր տեղեր եւ տարբեր ժամանակներ տեղի ունեցած են: Անոնք կընային զանց ընել Յիսուսի այս ինչ գործը կամ խօսքը իրենց յարմար դատած ձեւով:

Առաքեալները նոյն ոճով չէին խօսեր, անշուշտ, հրեաներուն եւ հեթանոսներուն, ազէտ ժողովուրդին եւ զարգացածներուն: Պօղոս Առաքեալ տարբեր կերպով կը գրէ հռոմայեցիներուն, որոնք մտքի որոշ զարգացում եւ քաղաքակրթութիւն ունէին, քան Գաղատացիներուն կամ Կորնթացիներուն:

Պէտք է աւելցնենք, որ առաջին քրիստոնեաներուն հաւատքը աւետարանական ճշմարտութեան վրայ հիմնուած էր: Պօղոս առաքեալ անվախօրէն եւ վստահ շեշտով կը գրէ. «Եթէ Քրիստոս յարութիւն չէ առած, պարապ է ձեր հաւատքը»²⁰: Ան լսել կ'ուզէ, որ եթէ Յիսուսի յարութիւնը սուտ է, առաւել է, ընդունայն է ձեր հաւատքը:

Յետոյ, ինչպէս տեսանք նախապէս, Առաքեալներու քարոզութիւնը կազմակերպուած էր: Անոնք աշայուրջ կը հակէին որ քիսալ զաղափարներ չմտնեն Քրիստոսի վարդապետութեան մէջ:

Արդ, այսպիսի կազմակերպուած եւ հակակշռուած քարոզչութիւն մը՝ մեծ վստահութիւն կը ներշնչէ մեզի, որ Աւետարանին առաջին քարոզիչները եղած են հաւատարիմ եւ խղճամիտ փոխանցողները իրենց տեսածին եւ լսածին:

Աստեղծէ զատ, նկատի առնելիք կարեւոր կէտ մըն է նաեւ, որ Առաքեալները, Աւետարանը նախ քարոզած են հրեայ շրջանակներու մէջ, ուր՝ զոնէ այլ շրջանին՝ մեծ կարեւորութիւն կը տրուէր աւանդութեան:

Հրեայ մը, իր ամբողջ կեանքի ընթացքին կապուած էր զանազան աւանդութիւններու: Ան, մոլեռանդութեան հասնող հաւատարմութեամբ, կը պահէր պապենական սովորութիւնները եւ բարքերը. Այսպէս, հրեաները անդրանիկ մանուկը՝ ծնանելէն ութ օր ետք՝ կը թլփատէին, քառասուն օր ետք՝ տաճար տանելով՝ զոյգ մը տաւրակ կը մորթէին, Տիրոջ օրէնքին համաձայն: Անոնք ուտելէ առաջ պէտք էին ձեռքերնին լուալ, որոշուած պահքերը եւ ծոմերը պահել, եւլն:

20. Ա. Կորնթ. ԺԵ. 17:

Առաջին քրիստոնեաներն ալ շատ կապուած էին աւանդութեան: Պօղոս Առաքեալ ատէպ կը յորդորէ հաւատացեալները, որ պիտի փառած մնան աւանդութիւններուն. «Հաստատուն եղէք եւ լաւ պահեցէք աւանդութիւնները»²¹:

Դարձեալ Պօղոս Առաքեալն է որ Կորնթացիներուն կը գրէ, թէ մենք Քրիստոսի ծառաներն ենք, մատակարարները ատո՞ւտածային խորհուրդներուն. «արդ ինչ որ կը պահանջուի մատակարարներէն, հաւատարիմ ըլլալն է»²²:

Աւանդութիւններու պինդ կապուած հաւաքականութեան մը մէջ, որուն ղեկավարները «հաւատարիմ» նախարարներն են իրենց վճարուած պաշտօնին, դիւրին կերպով փոփոխութիւններ, գոնէ էական փոփոխութիւններ, չեն կրնար տեղի ունենալ:

Ապահով կարելի է ըլլալ որ մինչեւ Աւետարաններուն գրի առնուիլը, միեւնոյն Առաքեալները, միեւնոյն վարդապետութիւնը, միեւնոյն Աւետարանը քարոզած են ամէն կողմ:

ԳՐԱԴՈՐ ԱՌԵՏԱՐԱՆ

Ըսինք թէ, Յիսուսի մահէն ետք, Առաքեալները սկսած են բերանացի քարոզել Յիսուսի Աւետարանը:

Ժամանակ մը ետք, սակայն, կը տեսնենք որ ոմանք կը սկսին գրի առնել եթէ ոչ բոլոր Աւետարանը, քէթ մաս առ մաս, օրինակ, Յիսուսի խօսքերու հաւաքածոն, կամ միայն հրաշքները եւ Յիսուսի կեանքէն զանազան դրուագներ:

Ահա, վերոյիշեալ գրութիւններուն է որ կ'ակնարկէ Ղուկաս Աւետարանիչը՝ երբ կ'ըսէ. «Քանի որ շատեր ձեռնարկեցին մեր մէջ կատարուած զէպքերու պատմութիւնը շարադրել...»²³:

Աւետարանիչները, շատ հաւանաբար, իրենց Աւետարանները գրելու ժամանակ՝ օգտուած են սոյն գրութիւններէն:

Բնական է, որ իւրաքանչիւր Աւետարանիչ, իր մտադրած ծրագիրին համաձայն, օգտագործած է վերոյիշեալ գրութիւնները:

Գիտենք՝ թէ Մատթէոս, հրեաներուն համար գրելով, Յիսուսը առաւելապէս ներկայացուցած է որպէս խոստացուած Մեսիան, որպէս նոր Մովսէս մը, նոր օրէնադիր մը:

Մարկոս ուղած է ցոյց տալ՝ թէ Յիսուս Աստուծոյ Որդին է, բացարձակ տէր երկինքի եւ երկրի:

21. Բ. Թեսալ. Բ. 15:

22. Ա. Կորնթ. Դ. 1-2:

23. Ղուկ. Ա. 1:

Ղուկասի Աւետարանին մէջ Յիսուս մեզի կը ներկայանայ որպէս ընդհանուր փրկիչը՝ թէ՛ հրեաներուն եւ թէ՛ հեթանոսներուն:

Տարբեր նպատակներով գրուած Աւետարանները, հակառակ երեւութապէս աննշան տարբերութիւններու, հաւատարմօրէն կը ցոյցնեն Առաքեալներու հարազատ քարոզութիւնը եւ բերանացի աւանդութիւնը:

Չորրորդ Աւետարանին հեղինակը, Յովհաննէս Առաքեալ, հակառակ իր իւրայատուկ ոճին, հակառակ իր աստուածաբանի բարձրաթուիչ սլացքներուն, որպէս ականատես եւ ականջալուր վկայ, խորքին մէջ, պատմական Յիսուսն է որ կը ներկայացնէ մեզի:

ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Տեսանք՝ թէ երեք առաջին Աւետարանները գրուած են 60-70 թուականներուն:

Արդ, կը հարցնենք, թէ ի՞նչպէս Յիսուսի մահէն՝ շուրջ 35 տարիներ ետք գրուած Աւետարանները, կրնան հարազատօրէն մեզի ներկայացնել Յիսուսի գործերը եւ խօսքերը:

Ահաւասիկ առարկութիւն մը, որ վարժէ նկատի առնել եւ լուսաբանել:

Փորձառութեամբ գիտենք, թէ մարդու կեանքէն դէպք մը, սիրուած նիւթ մը, որ ստէպ եւ շարունակական կերպով կը պատմուի անձի մը կողմէ, դիւրաւ չի մոռցուիր:

Եթէ առիթը ունեցած էք՝ ձեր գլխէն անցած կարեւոր դէպք մը յաճախակի պատմելու ուրիշներուն, տարիներ ետքն ալ կը յիշէք դայն, իր մանրամասնութիւններով, իբրեւ թէ այդ դէպքը դեռ նոր պատահած ըլլար:

Դարձեալ դժուար է մոռնալ դէպք մը, խօսք մը, որ խոր տպաւորութիւն թողած է մեր վրայ:

Պատե՞րազմի մասնակցած զինուոր մը, տարիներ ետք ալ պիտի յիշէ գլխէն անցածները:

Արկածի մը հանդիպած մէկը, դիւրաւ չի կրնար մոռնալ այդ դէպքին նոյնիսկ յետին մանրամասնութիւնները:

Արդ, Առաքեալներուն գործն էր, գրեթէ ամէն օր, խօսիլ Յիսուսի մասին, քարոզել անոր վարդապետութիւնը եւ աստուածային խօսքերը, եւ ասիկա՝ իրենց ամբողջ կեանքի ընթացքին:

Այս ձեւով, Յովհաննէս Աւետարանիչ, իր խոր ծերութեան շրջանին ալ, ամենայնպէս մանրամասնութիւններով կը յիշէր ո՛չ միայն Յիսուսի գործերը, այլ նաեւ Անոր վերջին ընթրիքի երկար կըտակը, քանի որ, ամէն օր, իր խօսակցութիւններուն նախասիրուած

նիւթն էր Յիսուս եւ անոր կեանքը: Ո՛վ գիտէ, քանի հարիւր անգամներ պատմած էր Ան Յիսուսի գործերը ու խօսքերը, իւրացուցած էր զանոնք եւ ապա դրած՝ իր Աւետարանին մէջ:

Նոյն բանը ըրած են նաեւ Յիսուսի միւս Առաքեալներն ու աշակերտները:

Յիսուս, իր կենդանութեան իսկ, Առաքեալները զոյգ զոյգ կը շրջէր քարոզութեան²⁴, եւ իր յարութենէն ետք ալ հրահանգ տուաւ անոնց՝ բոլոր ազգերուն քարոզելու իր վարդապետութիւնը²⁵:

Եւ Առաքեալները հաւատարմօրէն կատարեցին Յիսուսի հրահանգը՝ ի գին իրենց արիւնին:

ՅԻՍՈՒՍԻ ԽՕՍՔԵՐԸ ՊԱՐՁ ԷՒՆ ԵՒ ԱԶԴԵՑԻԿ

Յիսուսի խօսքերը ընդհանրապէս պարզ էին, յստակ, համառօտ, դուստպ, ինքնատիպ, որոնք դիւրաւ կը դրոշմուէին մարդկային յիշողութեան մէջ:

Վարելի՞ է շուտով մոռնալ ասոնց նման կաղապարուած, քանդակուած խօսքեր:

«Երանի՜ հոգիով աղքատներուն...», երանի՜ սղաւորներուն...», երանի՜ հեղերուն...»²⁶ եւայլն:

Եւ կամ սա ձեւի նախադասութիւններ.

«Լսած էք որ ըսուեր է հիներուն...: Բայց ես կ'ըսեմ ձեզի...»²⁷: «Մի՛ դատէք, որպէսզի չդատուիք...»²⁸: «Ոնդրեցէ՛ք եւ պիտի տըրուի ձեզի, փնտռեցէ՛ք եւ պիտի գտնէք, բախեցէ՛ք եւ պիտի բացուի ձեզի...»²⁹: «Եթէ ոտքդ կը դայթակղեցնէ զեզ՝ կտրէ՛ ու նետէ...»: «Եթէ աչքդ կը դայթակղեցնէ զեզ՝ հանէ զայն...»³⁰, եւայլն:

Եթէ աչքդ կը դայթակղեցնէ զեզ՝ հանէ զայն...»³⁰, եւայլն:

Այսքան պարզ, այսքան պատկերաւոր խօսքեր չատ գիւրին է մտքին մէջ պահել:

Նոյնքան պարզ եւ դիւրամբռնելի են նաեւ Յիսուսի առակները, որոնք դեղեցիկ եւ տպաւորիչ պատմութիւններ են:

Անառակ որդիին առակը միջազգային գրականութեան դոհարներէն մէկն է, անտարակոյս, ա՛յնքան բնական, ա՛յնքան յուզիչ:

24. Մարկ. 2. 7:

25. Մատթ. ԻԸ. 18-20:

26. Մատթ. Ե. 35:

27. Մատթ. Ե. 21-48:

28. Մատթ. Է. 1:

29. Մատթ. Է. 7-8:

30. Մարկ. Թ. 44-46:

Նուազ գեղեցիկ չեն նաեւ միւս առակները, Սերմնացանին, Ուրմներուն, Դատաւորին, Մանանեխի հատիկին, Կոյսերուն: Մարդ մէկ անգամ լսելով նման առակներ, ա՛յլ չի մոռնար դանոնք:

Յետոյ, Յիսուս ամէն տեղ որպէս վարդապետ եւ ուսուցիչ կը ներկայանար եւ տիրական շեշտով ամէնուն կը սորվեցնէր իր վարդապետութիւնը:

Նկատելի է որ, չափ անգամ, Յիսուս՝ իրեն եղած հարցումներուն պատասխանելով է որ կը պարզէր իր վարդապետութեան նիւթերը:

Այսպէս, օրինակի համար, իրեն կը հարցուի. «Վարդապետ, ո՞րն է ամէնէն մեծ պատուիրանը»³¹, «Վարդապետ բարի, ի՞նչ պէտք է ընեմ յաւիտենական կեանքը ժառանգելու համար»³². աշակերտները Յիսուսի մօտենալով ըսին. «ո՞վ է ամէնէն մեծը երկինքի արքայութեան մէջ»³³, «ո՞վ է իմ ընկերս»³⁴. ուրիշ օր մը Յովհաննէսի աշակերտները կը հարցնեն Յիսուսի. «ինչո՞ւ մենք եւ փարիսեցիները աշակերտները կը հարցնեն Յիսուսի. «ինչո՞ւ մենք եւ փարիսեցիները աշակերտները կը հարցնեն Յիսուսի. «ինչո՞ւ մենք եւ փարիսեցիները աշակերտները կը հարցնեն Յիսուսի. «ինչո՞ւ մենք եւ փարիսեցիները աշակերտները կը հարցնեն Յիսուսի. «ինչո՞ւ մենք եւ փարիսեցիները աշակերտները կը հարցնեն Յիսուսի»³⁵: «Հարձակ ծոմ կը պահենք եւ քու աշակերտներդ չեն պահենք»³⁶, եւսյն:

Յիսուսի պատասխանները էին ողջամիտ, դիպուկ: Իր սորվեցողածները՝ չափ անգամ կատուած էին դէպքի մը, հրաշքի մը, անձի մը. այս ալ աւելի պատճառ մըն էր որ Առաքեալները միտքերնին պահէին Յիսուսի ըսածները:

Աւելցնենք նաեւ որ Յիսուսի խօսքերը ներդաշնակ էին, կշռոյթով, ազատ ոտանաւորի ձեւով, որոնք աւելի ուժգին կը դրոշմուին յիշողութեան մէջ. «Եթէ դուք ներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի ներէ ձեզի. իսկ եթէ դուք չներէք մարդոց իրենց յանցանքները, եւ ո՛չ ձեր Հայրը պիտի ներէ ձեր յանցանքները»³⁷: «Վա՛յ ձեզի, որ հիմա յագեցած էք, վասնզի պիտի անօթենաք: Վա՛յ ձեզի, որ հիմա կը ծիծաղիք, վասնզի պիտի տաք ու պիտի լաք»³⁸, եւսյն:

Տարակոյս չկայ թէ Յիսուսի խօսքերը մեծ ազդեցութիւն կ'ընէին ունկնդիրներուն վրայ, որոնք դիւթուած անոր գեղեցիկ խօսուածքէն կ'ըմէին. «ոչ ոք այն մարդուն նման խօսած է երբեք»³⁹:

31. Մատթ. ԻԲ. 36:

32. Մարկ. Ժ. 17:

33. Մատթ. ԺԸ. 1-2:

34. Դուկ. Ժ. 29:

35. Մատթ. Թ. 14:

36. Մատթ. ԺԲ. 10:

37. Մատթ. Զ. 14-15:

38. Դուկ. Զ. 25-26:

39. Յովհ. Է. 46:

Եւ հոսկ ըսենք նաեւ՝ որ դէպք մը որքան եղական, ցնցիչ եւ հետաքրքրական ըլլայ, այնքան ալ տպաւորիչ կ'ըլլայ եւ անմոռանալի:

Այս տեսակէտով Յիսուսի կեանքը լի է բացառիկ եւ հետաքրքրաշարժ դրուադներով, ճոխ է բացառիկ դէպքերու ալիքանութեամբ:

Անոնցմէ յիշենք լիճին մէջ՝ Առաքեալներու ալեկոծութիւնը, Յիսուսի աուր վէճերը՝ փարիսեցիներուն հետ, Ղազարոսի շունդալից յարութիւնը, Յիսուսի՝ Երուսաղէմ փառաշուք մուտքը, խարաղանով՝ տաճարէն վաճառականները դուրս վռնտելը, եղբերդական խաչելութիւնը, աննախընթաց Յարութիւնը, երկինք Համբարձումը, դիւրաւ մոռցուելիք դէպքեր չեն:

Յիսուս անթիւ հրաշքներ դործեց: Ամէն մէկ հրաշք, արդէն, եղական դէպք մըն է՝ որ չի մոռցուիր:

Մանաւանդ թէ Յիսուսի ամբողջ կեանքը, իր ծնունդէն մինչեւ խաչելութիւնը, յարութենէն մինչեւ համբարձումը, հրաշալի պատմութիւն մըն է:

Եզրակացնելով կ'ըսենք, թէ չորս Աւետարանները, ամէն տեսակէտով, ամէն երաշխիք կ'ընծայեն լիութիւն արժանի ըլլալու մեր վըստահութեան եւ հաւատքին:

Անոնց մէջ ներկայ է իրական Յիսուսը՝ իր պայծառ դէմքով: Անոնց մէջն է մենք կը լսենք հարազատ ձայնը Յիսուսի:

Աւետարանիչները ունէին պէտք եղած տուեալները, բերանացի եւ գրաւոր աղբիւրներ, Յիսուսը մեզի ներկայացնելու իր իսկական դիմադիծով ու խօսքերով:

Երկրորդական նիւթերու մէջ փոքր տարբերութիւնները, որոնք կը տեսնուին Աւետարաններու մէջ, երբեք արդեւ մը չեն, որ դոյզն կերպով նսեմանայ Քրիստոսի ճառագայթող դէմքը՝ որ այնքան դաբեր ետք կը մնայ կենդանի, առինքնող եւ աստուածային:

Ճիշտ է՝ թէ Աւետարանիչները, Հերոդոտոսի, Տակիտոսի կամ Պլուտարքոսի նման, բառին իսկական առումով պատմագիրներ չէին, որոնց դործը երկար ուսումնասիրութիւններու, պետական դիւաններու մէջ դռնուող վաւերացութիւններու եւ այլ պրպտումներու արդիւնքն է:

Ձայնագրելու գործիք չունէին անոնք, որպէսզի քառ առ քառ արձանագրէին Յիսուսի խօսքերը եւ այնպէս մեզի փոխանցէին: Անոնք չափ ալ մտահոգուած չէին դէպքի մը ճշգրիտ տեղը ու ժամանակը ճշտելով, դէմքի մը լման պատկերը գծելով:

Աւետարանիչներու գործին նպատակը աւելի կրօնական էր: Անոնք ամէն բանէ առաջ հաւատքի մարդիկ էին: Հաւատքի աճքերով

է որ կը տեսնէին Յիսուսը եւ ո՛չ թէ արդիական իմաստով՝ պատմադէտի մը ակնոցով:

Անոնց հաւատքը, սակայն, ո՛չ թէ երեւակայութեան կամ զգացումներու վրայ հիմնուած էր՝ այլ իրականութեան:

Աւետարաններու մէջ ամէն ինչ բնական է եւ առարկայական:

Հաւատքի լոյսով ողողուած, պատմական Քրիստոսն է՝ որ կը ներկայանայ մեզի Աւետարաններու մէջէն:

Այս չորս Աւետարանները գրի առած են Աւետարանիչները: Բայց, անոնց հեղինակներն են նաեւ Առաքեալները, որոնք այնքան նուիրումով եւ անձնազոհութեամբ տարածեցին Քրիստոսի փրկազորութեան մեծ Աւետիսը՝ աշխարհի չորս ծագերուն:

Առաքեալներէն զատ, Աւետարաններու կազմաւորման մէջ, իրենց թանկարժէք նպաստը բերած են առաջին քրիստոնեաները, որոնցմէ չատեր ականատես եւ ականջալուր վկաներն էին Յիսուսի, եւ իրենց տեսածներն ու լսածները հաւատարմօրէն պահած եւ անաղարտ փոխանցած են իրենց յաջորդներուն:

Վերջապէս, Աւետարաններուն տէրն է Քրիստոսի նախնական Եկեղեցին, իր գլուխով եւ անդամներով, որոնցմէ ոմանք կենդանի խօսքով, ուրիշներ գրիչով, մեզի ժառանգ թողուցին Աւետարանը, համաշխարհային քաղաքակրթութեան գլուխ-գործոցը, կեանքի եւ լոյսի աղբիւր մը, որ փոխեց ժողովուրդներու դժխեմ ճակատագիրը, խաղաղութիւն բերաւ անհամար հոգիներու, բարձրացնելով աստուածացուց մարդկային անկեալ բնութիւնը:

Առաջապէս մը չի կրնար այսքան բարեւ մարդկութեան:

(Շար. 13)

Հ. ԵՓՐԵՄ ՏԵՐ-ՂԱԶԱՐԻԱՆ

Résumé

LE CHRIST A LA LUMIÈRE DE LA SCIENCE

LES ÉVANGILES: VÉRITÉ HISTORIQUE OU FABLES?

(P. EPHREM DER-GHAZARIAN)

Ayant examiné dans le chapitre précédant l'école des formes, l'A. passe à présent à une évaluation positive de l'historicité des Evangiles. Il étudie successivement les preuves intérieures d'historicité, la véracité des données concernant le milieu et le cadre historiques de la vie de Jésus relatés par les Evangiles, la langue de ces derniers, la tradition et le témoignage de l'Eglise primitive, la différence de style, de mentalité, de procédés entre les Evangiles canoniques et apocryphes, les questions posées par la rédaction écrite, les techniques mnémoniques, la facile assimilation et mémorisation des paroles de Jésus. Il en conclut que c'est le Christ *historique*, vu dans la lumière de la *foi*, que les Evangiles nous présentent.